ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 օգոստոսի 2021թ. թիվ 455-Ա

ՍՈՒՍԱՆՆԱ ԴՈՒՄԻԿՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223 հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի 17.08.2021թ. նիստի թիվ 6 արձանագրության 1-ին կետը և հաշվի առնելով Ս.Դումիկյանի 20.08.2021թ. բացատրությունը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Ուսումնական հաստատության կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունները ոչ պատշաճ կատարելու, 2021 թվականի հուլիսի 21-ից 23-ը իրականացված ներքին աուդիտի արդյունքում կազմված աուդիտորական հաշվետվությամբ արձանագրված մի շարք խախտումներ կատարելու համար «ՀՀ Լոռու մարզի Մեծավանի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Սուսաննա Դումիկյանի նկատմամբ կիրառել «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:

2. «ՀՀ Լոռու մարզի Մեծավանի թիվ 1 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն Ս.Դումիկյանին՝

Աուդիտորական հաշվետվությամբ սահմանված ժամկետում վերացնել հայտնաբերված խախտումներն ու թերությունները և արդյունքների մասին տեղեկացնել:

3. Մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

8/23/2021

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Ա.ԽԱՉԱՏՐՅԱՆ

2021թ. օգոստոսի 23
ք.Վանաձոր